ibz
Office des étrangers
Vreemdelingenzaken

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

.be

Armenian

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային պաշտպանությունը Բելգիայում 4
2. Ե՞րբ դիմել միջազգային պաշպտանության 5
3. Որոշ կարևոր հասկացություններ 6
3.1. Ի՞նչ է միջազգային պաշտպանությունը 6
3.2. Ո՞վ է միջազգային պաշտպանություն հայցողը 7
3.3. Ի՞նչ է Դուբլինը 7
3.4. Ի՞նչ է նշանակում «վերջնական որոշում» 7
3.5. Ի՞նչ է նշանակում միջազգային պաշտպանութան հաջորդ հայց 7
3.6. Ի՞նչ է նշանակում «կենսաչափական (բիոմետրիկ) տվյալներ» 8
4. Ընթացակարգը 8
4.1. Որտե՞ղ պետք է դիմել միջազգային պաշտպանության համար 8
4.2. Ե՞րբ է սկսվում ընթացակարգը 8
4.2.1. Հայցը ներկայացնելու և գրանցելու կարգը 9
4.2.2. Հայցը ձևակերպելու կարգը 13
5. Արդյո՞ք հաշվի են առնվում իմ պահանջները 16
6. Դուբլի՞ն 17
6.1. Ե՞րբ է կիրառվում Դուբլինը 18
6.2. Կարո՞ղ են ինձ բռնի կերպով տեղափոխել իմ հայցի համար պատասխանատու անդամ պետություն 18
7. Օտարերկրացիների հարցերով ծառայությունում հարցազրույց կունենա՞մ... 19
7.1. Ո՞րն է համագործակցող աշխատակցի և թարգմանչի դերը 19
7.2. Ո՞րն է հարցազրույցի նպատակը 20
7.3. Հարցազրույցի ավարտը 21
7.4. Համագործակցելու պարտավորությունը 21
7.5. Ինչպե՞ս է կազմակերպվելու հարցազրույցը 22
8. Ի՞նչ փաստաթղթեր են ձեզ տրվում 23
8.1. Ընթացակարգի ընթացքում 23
8.2. Փախստականի կարգավիճակ տալուց հետո 24
8.3. Ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ տալուց հետո 24
8.4. Միջազգային պաշտպանության հայցի մերժումից հետո 25
9. Կարո՞ղ եմ դիմել իմ ինքնության տվյալները փոխելու համար 26
10. Ես անչափահաս եմ և առանց ուղեկցության... Ի՞նչ պետք է անեմ 26
11. Կարո՞ղ է փաստաբանը օգնել ինձ ընթացակարգի ժամանակ 28
12. Ինչպե՞ս կարող եմ վերադառնալ իմ երկիր 29
13. Կարո՞ղ են ինձ կալանքի տակ պահել ընթացակարգի ընթացքում 30
14. Ի՞նչ է անում է Օտարերկրացիների հարցերով ծառայությունը իմ անձնական տվյալների հետ 30
15. Օգտակար հասցեներ 31

1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԵԼԳԻԱՅՈՒՄ

Բելգիայի տարածքում գտնվող ցանկացած օտարերկրացի կարող է Բելգիայի իրավասու մարմիններից միջազգային պաշտպանություն խնդրել Բելգիայում:

Այս գործընթացում ներգրավված են մի քանի մարմիններ.

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (OE)

Օտարերկրացիների հարցերով ծառայությունը Բելգիայում օտարերկրացիների՝ տարածք մուտք գործելու, բնակության իրավունքի, երկրում հաստատվելու և երկրից վտարվելու հարցերով զբաղվող իրավասու մարմին է:

Օտարերկրացիների հարցերով ծառայությունը գրանցում է միջազգային պաշտպանության հայտը և որոշում, թե արդյո՞ք Բելգիան, կամ մեկ այլ անդամ պետություն է պատասխանատու հայցի քննության համար:

https://dofi.ibz.be/

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԼԽԱՎՈՐ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ (CGRA)

Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը միջազգային պաշտպանության հայցը քննող իրավասու մարմինն է, որը որոշում է կայացնում պաշտպանության անհրաժեշտության վերաբերյալ:

https://www.cgra.be/

ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (CCE)

Օտարերկրացիների դատավարության խորհուրդը վարչական իրավական մարմին է:

Եթե օտարերկրացին համաձայն չէ Օտարերկրացիների հարցերով ծառայության կամ Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի կողմից կայացված որոշման հետ, նա կարող է բողոքարկել այդ որոշումը Օտարերկրացիների հարցերով դատական խորհրդում:

Օտարերկրացիների դատավարության խորհուրդը վճիռ է կայացնում այդ բողոքարկման վերաբերյալ:

Այն նաև լիովին իրավասու է կարգավիճակ շնորհել (փախստականի կամ ժամանակավոր պաշտպանության):

Օտարերկրացիների դատավարության խորհուրդը կարող է նաև որոշել գործը ետ ուղարկել Օտարերկրացիների հարցերով ծառայություն կամ Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատ եթե է լրացուցիչ հետաքննության անհրաժեշտություն լինի:

https://www.rvv-cce.be/

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (CE)

Պետական խորհուրդը այն իրավասու մարմինն է, որտեղ կարելի է բողոքարկել Օտարերկրացիների հարցերով դատական խորհրդի վճիռը:

https://www.conseildetat.be/

ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (Fedasil)

Fedasil-ը կազմակերպում է միջազգային պաշտպանություն հայցողների ընդունելությունը: Fedasil-ը վերահսկում է նաև միջազգային պաշտպանություն հայցողների բժշկական զննումը:
Բացի այդ, Գործակալությունը օգնում է դեպի երկիր կամավոր վերադարձի հարցում:

https://www.fedasil.be/

2. Ե՞ՐԲ ԴԻՄԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԱՆ ՀԱՄԱՐ

Դուք կարող եք միջազգային պաշտպանություն խնդրել Բելգիայում, եթե ձեր երկիր վերադառնալու դեպքում հետապնդման կամ լուրջ վնասներ կրելու վտանգ կա:

Նախ պետք է պարզել, թե որ անդամ պետությունն է պատասխանատու ձեր հայցը քննելու համար:

Եթե Բելգիան է պատասխանատու ձեր հայցը քննելու համար, Փախստականների ու հայրենիք չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը նախ քննում է, թե արդյոք ձեզ կարող է տրվել փախստականի կարգավիճակ: Եթե ոչ, ապա պարզում է, թե արդյոք դուք կարող եք ստանալ ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ:

Լրացուցիչ տեղեկություններ Դուբլինի մասին - կետ **6. Դուբլին**

ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Դուք կարող եք փախստականի կարգավիճակ ստանալ, եթե վախենում եք հետապնդումներից ձեր ռասայի, կրոնի, ազգության, քաղաքական համոզմունքների կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելու պատճառով ԵՎ եթե չեք կարող հույս դնել ձեր երկրի իշխանությունների պաշտպանության վրա:

Այդ չափանիշները սահմանվել են 1951թ. հուլիսի 28-ի Ժնևի կոնվենցիայում (որը նաև կոչվում է «Կոնվենցիա փախստականների մասին»):

ՕԺԱՆԴԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Եթե փախստականի կարգավիճակ ստանալու պայմանները չեք բավարարում, սակայն ձեր երկիր վերադառնալու դեպքում լուրջ վնասներ կրելու վտանգ կա, ապա ձեզ կարող է տրվել Օժանդակ պաշտպանության կարգավիճակ:

Որո՞նք են լուրջ վնասները.

- մահապատիժ, կամ
- հալածանքներ, կամ անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ, որոնց ենթարկվել է հայցողը իր երկրում, կամ
- լուրջ սպառնալիքներ քաղաքացիական անձի կամ նրա կյանքի դեմ՝ ներքին կամ միջազգային զինված հակամարտության դեպքում համատարած բռնության պատճառով:

3. ՈՐՈՇ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Ի՞ՆՉ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ դուք պաշտպանություն եք խնդրում Բելգիայի իշխանություններից ձեր երկիր վերադառնալու դեպքում հետապնդման կամ լուրջ վնասներ կրելու վտանգի պատճառով, դուք «միջազգային պաշտպանության հայց» եք ներկայացնում:

3.2 Ո՞Վ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՑՈՂԸ

Երբ դուք միջազգային պաշտպանության հայց եք ներկայացնում Բելգիայի իրավասու մարմիններին, դուք համարվում եք «միջազգային պաշտպանություն հայցող»՝ մինչև ձեր դիմումի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

3.3 Ի՞ՆՉ Է ԴՈՒԲԼԻՆԸ

Լրացուցիչ տեղեկություններ Դուբլինի մասին - կետ **6. Դուբլին**

Եվրոպայում դուք չեք կարող ազատորեն ընտրել այն երկիրը, որտեղից ցանկանում եք միջազգային պաշտպանություն ստանալ, ինչը ներառված է Դուբլինի կանոնակարգում, որը սահմանում է, թե «դուբլինյան որ երկիրը» պետք է քննի միջազգային պաշտպանության հայցը: Բելգիայում միջազգային պաշտպանության համար հայց ներկայացնելուց հետո Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ստուգում է, թե «դուբլինյան որ երկիրը» պետք է քննի ձեր հայցը՝ Բելգիան, թե մեկ այլ երկիր:

3.4 Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ՎԵՐՋՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ»

Երբ ձեր հայցի վերաբերյալ որոշում է կայացվել (այսինքն՝ պաշտպանության կարգավիճակ տրամադրել են, թե չեն տրամադրել), և այլևս անհնար է բողոքարկել այդ որոշման դեմ (ինչպես նախատեսված է օտարերկրացիների մասին օրենքով), դա «վերջնական որոշում է»:

3.5 Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԱՆ ՀԱՋՈՐԴ ՀԱՅՑ

«Միջազգային պաշտպանության հաջորդ հայցը» այն է, երբ դուք Բելգիայում արդեն դիմել եք միջազգային պաշտպանության համար, որի արդյունքում վերջնական որոշում է կայացվել, ԵՎ այնուհետև դուք նոր հայց եք ներկայացրել:

Ցանկացած հաջորդ հայց, որը ներկայացվում է նախորդի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց հետո, համարվում է «հաջորդ հայց»:

3.6 Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԿԵՆՍԱՉԱՓԱԿԱՆ (ԲԻՈՄԵՏՐԻԿ) ՏՎՅԱԼՆԵՐ»

Միջազգային պաշտպանության յուրաքանչյուր հայցողի համար հավաքագրվում են «կենսաչափական տվյալներ»՝ մատնահետքեր և դեմքի լուսանկար (անձը հաստատող փաստաթղթի լուսանկարի տիպի):

Դրանք կարող են օգտագործվել կենսաչափական (ավտոմատ) համեմատություն կատարելու համար:

4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

4.1 ՈՐՏԵ՞Ղ Է ՊԵՏՔ ԴԻՄԵԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եթե ցանկանում եք միջազգային պաշտպանություն խնդրել Բելգիայում, դուք պետք է **հնարավորինս շուտ** ԵՎ **անձամբ** ներկայանաք Օտարերկրացիների հարցերով ծառայություն:

Պաշտպանություն կարելի է խնդրել նաև.

- **Սահմանին**՝ սահմանային հսկողության համար պատասխանատու մարմիններից **Փակ կենտրոնում**՝ Օտարերկրացիների հարցերով ծառայության պաշտոնյաներից

- **Բանտում**՝ բանտի տնօրենից

4.2 Ե՞ՐԲ Է ՍԿՍՎՈՒՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ընթացակարգը բաժանվում է երեք փուլի.

- Հայցը ներկայացնել
- Հայցը գրանցել
- Հայցը ձևակերպել

Ձեր ներկայությունն անձամբ անհրաժեշտ է այս երեք փուլերից յուրաքանչյուրում:

4.2.1 ՀԱՅՑԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Եթե դուք գտնվում եք Բելգիայի տարածքում և ցանկանում եք միջազգային պաշտպանություն խնդրել, պետք է ներկայանաք Օտարերկրացիների հարցերով ծառայություն, որտեղ էլ կարող եք ներկայացնել ձեր հայցը:

Հնարավորության դեպքում Օտարերկրացիների հարցերով ծառայությունը նույն օրը գրանցում է ձեր հայցը:

Ձեր հայցը գրանցելիս ձեզ տեղեկացվում են հետագա ընթացակարգի մասին: Ընթացակարգը սկսվում է միայն այն ժամանակ, երբ դուք իրականում ձևակերպել եք հայցը:

Եթե հայցը նույն օրը չձևակերպվի, ձեզ կտրվի տեղեկանք այն մասին, որ դուք ներկայացել եք: Դա վկայում է, որ դուք միջազգային պաշտպանություն եք խնդրել: Այդ պահից ի վեր դուք համարվում եք միջազգային պաշտպանություն հայցող:

Գրանցման ժամանակ պետք է.

Պարզել ինքնությունը

Գրանցման ժամանակ Օտարերկրացիների հարցերով ծառայությունը պարզում է ձեր ինքնությունը (ազգանունը, անունը, ծննդյան ամսաթիվը, ծննդավայրը, ազգությունը), նախընտրելի է ձեր մոտ եղած անձը հաստատող փաստաթղթերի հիման վրա: Եթե չունեք անձը հաստատող փաստաթղթեր, տվյալները նշվում են ձեր հայտարարության հիման վրա:

Եթե ունեք **անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները** կամ **դրանց պատճենները**, դրանք անպայման պետք է բերել Օտարերկրացիների հարցերով ծառայություն:

Ստանալ այլ համապատասխան տեղեկություններ

Գրանցման ժամանակ Օտարերկրացիների հարցերով ծառայությունը պարզում է, թե երբ եք ժամանել Բելգիա, արդյոք ունեք արդեն բնակության հասցե և արդյոք ձեզ պետք են ընդունելության անհրաժեշտ պայմաններ:
Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ձեզ հարցնում է նաև, թե արդյոք ձեզ պետք է թարգմանիչ ընթացակարգի ժամանակ:

Պարզել հայցողի խոցելի կողմերը

Գրանցման ժամանակ հարցեր են տրվում նաև ձեր խոցելի կամ թույլ կողմերի վերաբերյալ, որոնք պետք է անպայման նշել ընթացակարգի ժամանակ հաշվի առնելու համար:

Տեղեկացնել հայցողին նրա իրավունքների և պարտականությունների մասին

Որպես միջազգային պաշտպանություն հայցող դուք ունեք մի շարք իրավունքներ, ինչպես նաև մի շարք պարտականություններ:
Այսպես, դուք ունեք կացարանի իրավունք և կարող եք **նյութական օգնություն ստանալ** Fedasil-ից:

<u>Ուշադրություն.</u> ընդունելության իրավունքը կարող է սահմանափակ լինել:

Որպես միջազգային պաշտպանություն հայցող, դուք պաշտպանված եք նաև վտարվելուց: Դա նշանակում է, որ սկզբունքորեն ձեզ չեն կարող հետ ուղարկել ձեր երկիր միջազգային պաշտպանության ընթացակարգի ընթացքում, բացառությամբ օտարերկրացիների մասին օրենքով նախատեսված դեպքերի:

Ավելին, ընթացակարգի ժամանակ Բելգիայի իշխանությունները ոչ մի պահի չեն կարող կապ հաստատել կամ տեղեկություններ տրամադրել ձեր երկրի իշխանություններին:

Որպես միջազգային պաշտպանություն հայցող, ձեզանից ակնկալվում է նաև ասել ճշմարտությունը և **լիարժեք համագործակցել** ընթացակարգի ժամանակ:

Եթե ունեք անձը հաստատող փաստաթղթեր, ձեզնից **պահանջվում է** հնարավորինս շուտ ներկայացնել դրանք ձեր հայցը գրանցելիս:

Ձեզնից **պահանջվում է** նաև հնարավորինս արագ ներկայացնել ցանկացած այլ տեղեկատվություն, որը կարող է օգնել իրավասու մարմիններին պարզել, թե որ անդամ պետությունն է պատասխանատու ձեր հայցը քննելու համար:

Որո՞նք են կարևոր փաստաթղթերը.

Բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են ձեր տարիքին, անցյալին (ներառյալ ընտանիքի համապատասխան անդամներինը), ինքնությանը, ազգությանը, ձեր երկրին(ներին) և նախկին բնակավայրին(երին), միջազգային պաշտպանության նախորդ հայցերի վերաբերյալ տեղեկություններին, ձեր ճամփորդության երթուղուն(ներին), ձեր անձը հաստատող փաստաթղթերին և այլն, ինչպես նաև ցանկացած այլ փաստաթուղթ, որը վկայում է ձեր երկրում ունեցած խնդիրների մասին:

Փաստաթղթերը պահելը կամ որոշ փաստաթղթեր ներկայացնելուց հրաժարվելը կարող է վկայել, որ չեք համագործակցում:

Չհամագործակցելու արդյունքում ձեր հայցի քննության ընթացքում ձեզ կարող են պահել որոշակի վայրում կամ Փախստականների ու հայրենիք չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը կարող է ձեր հայցը շատ արագ քննել, եթե Բելգիան է պատասխանատու հայցի քննության համար:

Ձեր հայցը գրանցելիս ձեզ տեղեկացվում են ձեր իրավունքների և պարտականությունների մասին:

Գրանցել կենսաչափական տվյալները

Ձեր հայցը գրանցելիս Օտարերկրացիների հարցերով ծառայության աշխատակիցը ձեզ լուսանկարում է և վերցնում է ձեր մատնահետքերը, ինչը թույլ է տալիս Օտարերկրացիների հարցերով ծառայությանը պարզել, թե արդյոք ձեր տվյալներն առկա են Օտարերկրացիների հարցերով ծառայությունում կամ մեկ այլ անդամ պետությունում, որը կիրառում է, այսպես կոչված, «Դուբլինի» կանոնակարգը:

Ձեր լուսանկարը կցվում է ձեր վարչական գործին և դրվում է Օտարերկրացիների հարցերով ծառայության տարբեր փաստաթղթերի վրա, որոնք տրվում են ձեզ:

Հայցը գրանցելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել Օտարերկրացիների հարցերով ծառայության կայքում.

https://tinyurl.com/dpipresentationENG

Տվյալները.

Օտարերկրացիների հարցերով ծառայություն -
Միջազգային պաշտպանության բաժին

e-mail : registration@ibz.fgov.be

4.2.2 ՀԱՅՑԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ձեր հայցի գրանցման օրը կամ ձեր հայցը ներկայացնելուց հետո ամենաուշը 30 օրվա ընթացքում դուք հնարավորություն ունեք ձևակերպել ձեր հայցը:

Հայցը ձևակերպելիս պետք է պահպանվեն մի շարք իրավական պահանջներ.

Բնակության վայր ընտրել Բելգիայում

Բոլոր հայցողները պարտավոր են բնակության վայր ընտրել Բելգիայում: Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ձեզ հարցնում է, թե որտեղ եք բնակվում: Դա կարող է լինել այն հասցեն, որտեղ դուք իրականում ապրում եք, սակայն դուք կարող եք տալ նաև ձեր փաստաբանի, ընկերների, ձեր ընտանիքի և այլոց հասցեն որպես ձեր բնակության վայր Բելգիայում: Օտարերկրացիների հարցերով ծառայությունը և Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը ձեր ընթացակարգին վերաբերող բոլոր նամակները (այսինքն, ծանուցագրեր, տեղեկություններ ստանալու հարցումներ, որոշումներ և այլն) ուղարկում են այդ հասցեով:

Եթե դուք չեք ընտրում բնակության վայր, ապա Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի հասցեն է համարվում ձեր ընտրված բնակավայրը, և ողջ նամակագրությունն ուղարկվում է այդ հասցեով: Այդ դեպքում դուք պետք է մշտապես գնաք

Այդ ձևը կցված է սույն Տեղեկագրի Հավելված-ին և հասանելի է նաև Օտարերկրացիների հարցերով ծառայության կայքում.

https://tinyurl.com/dpiformsENG

Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատ ձեր նամակները ստանալու համար:

Օրենքով պարտադիր է հասցեի ցանկացած փոփոխության մասին տեղեկացնել Օտարերկրացիների հարցերով ծառայությանը և Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատին:

Դրա համար հատուկ ձև կա, որը պետք է լրացվի և ուղարկվի պատվիրված փոստով Օտարերկրացիների հարցերով ծառայությանը և Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատին:

Զգուշացում. Եթե փոխեք ձեր հասցեն և չհայտնեք կամ ժամանակին չհայտնեք Օտարերկրացիների հարցերով ծառայությանը կամ Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատին, դա կարող է բացասական հետևանքներ ունենալ միջազգային պաշտպանության ձեր հայցի վրա: Ձեր բոլոր նամակները կուղարկվեն վերջին հայտնի հասցեով, ինչը նշանակում է, որ դուք չեք ստանա դրանք կամ որոշ փաստաթղթեր ուշ կստանաք:

Ընտրել ընթացակարգի լեզուն

Հայցը ձևակերպելիս պետք է որոշել, թե որ լեզուն պետք է օգտագործվի ընթացակարգի ժամանակ՝ ֆրանսերեն կամ նիդերլանդերեն:
Եթե դուք բավականաչափ տիրապետում եք ֆրանսերենին կամ նիդերլանդերենին, կարող եք ընտրել այդ երկու լեզուներից մեկը, որպես ընթացակարգի լեզու:

Եթե դուք բավականաչափ չեք տիրապետում ֆրանսերենին կամ նիդերլանդերենին, Օտարերկրացիների հարցերով ծառայությունն ինքն է որոշում ընթացակարգի լեզուն՝ ըստ համապատասխան ծառայությունների և մարմինների պահանջների:

Երբ ընթացակարգի լեզուն որոշվում է, այն պահպանվում է ընթացակարգի ողջ ընթացքում, ներառյալ Փախստականների ու հայրենիք չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատում և Օտարերկրացիների հարցերով դատական խորհրդում:

Ընթացակարգի լեզուն պահպանվում է նաև այն ժամանակ, եթե դուք հաջորդ հայցն եք ներկայացնում:

Հավելված 26 / 26quinquies

Ձեր հայցը ձևակերպելիս Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ձեզ տալիս է հավելված/ annexe 26 (*եթե առաջին հայցն է*) կամ հավելված 26 quinquies (*եթե հաջորդ հայցն է*):

Այդ փաստաթղթի վրա նշվում են ձեր ինքնության տվյալները, ինչպես նաև ձեր լուսանկարը: Այդ փաստաթուղթը վկայում է, որ դուք միջազգային պաշտպանության հայց եք ներկայացրել:

Սակայն, այն չի համարվում անձը հաստատող կամ քաղաքացիության փաստաթուղթ:

Ուշադրություն.

Եթե դուք չեք արձագանքում ձեր հայցը ձևակերպելու հրավերին, այն ինքնաբերաբար չեղարկվում է: Այդ պահից ի վեր դուք այլևս միջազգային պաշտպանություն հայցող չեք համարվում: Եթե, այնուամենայնիվ, ավելի ուշ նորից եք դիմում, հայցը կրկին բացվում է:

5. ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՇՎԻ ԵՆ ԱՌՆՎՈՒՄ ԻՄ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ընթացակարգի ժամանակ հարցազրույց կունենաք, ձեզ կլսեն, որպեսզի համապատասխան մարմինները կարողանան ճիշտ ընկալել ձեր անձնական վիճակը և ձեր հայցի դրդապատճառը: Բոլոր հայցողները պետք է ունենան իրենց պատմությունը լավագույն պայմաններում պատմելու հավասարաչափ հնարավորություն, որպեսզի նրանց հայցը ճշգրիտ կերպով գնահատվի:

Օտարերկրացիների հարցերով ծառայության աշխատակիցը ձեզ հետ կլրացնի հարցաթերթիկ պարզելու համար, թե արդյոք պետք է հաշվի առնվեն ձեր անձնական վիճակի որոշ ասպեկտներ, հնարավորություն տալով ձեզ լավագույն պայմաններում լավագույնս պատմել ձեր պատմությունը: Ձեր պատասխանների հիման վրա աշխատակիցը կպարզի, թե արդյոք ձեզ պետք է հատուկ աջակցություն՝ կապված ձեր վիճակի հետ:

Ձեր շահերից է բխում հնարավորինս ճշգրիտ և լիարժեք պատասխանել աշխատակցի տված հարցերին և հնարավորինս արագ ներկայացնել ձեր կարիքներն ու պահանջները վկայող տեղեկությունները: Այդպես, ընթացակարգի ժամանակ հաշվի կառնվի ձեր անձնական վիճակը:

Դուք միշտ հնարավորություն ունեք լրացուցիչ տեղեկություններ հաղորդել ընթացակարգի հետագա փուլերում:

6. ԴՈՒԲԼԻՆ

Այն փաստը, որ դուք գտնվում եք Բելգիայում և միջազգային պաշտպանության հայց եք ներկայացրել Բելգիայում, չի նշանակում, որ Բելգիան պետք է քննի ձեր հայցը:

Եվրոպայում կան կանոններ, որոնցով որոշվում է, թե որ երկիրն է պատասխանատու միջազգային պաշտպանության հայցը քննելու համար: Այդ կանոնները սահմանվել են **Դուբլինի կանոնակարգում**:

Cfr. Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2013թ. հունիսի 26-ի 604/2013 Կանոնակարգը, որը սահմանում է երրորդ երկրի քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կողմից անդամ պետություններից մեկում միջազգային պաշտպանության հայցի քննության համար պատասխանատու անդամ պետության որոշման չափանիշներն ու մեխանիզմները:

Սույն Կանոնակարգով սահմանված կանոնները կիրառվում են 31 երկրների կողմից, ներառյալ Բելգիան:

Նախքան ձեր՝ երկրից հեռանալու պատճառները քննելը, նախ պետք է որոշել, թե որ երկիրը պետք է քննի միջազգային պաշտպանության ձեր հայցը՝ Դուբլինի կանոններին համապատասխան:

Ձեր հայցը գրանցելիս դուք կստանաք «Ես ապաստան եմ խնդրել Եվրոպական միությունում. ո՞ր երկիրն է պատասխանատու իմ հայցը քննելու համար» տեղեկագիրը, որտեղ կան լրացուցիչ տեղեկություններ:

Այդ տեղեկագիրը հասանելի է մի քանի լեզուներով և այն կարելի է գտնել նաև Օտարերկրացիների հարցերով ծառայության կայքում.

https://tinyurl.com/DPIDublinENG

6.1 Ե՞ՐԲ Է ԿԻՐԱՌՎՈՒՄ ԴՈՒԲԼԻՆԸ

Դուբլինի կանոնակարգը նախատեսում է մի քանի չափանիշներ, որոնց հիման վրա որոշվում է Դուբլինի քննություն սկսել: Այդ քննությունը հիմնվում է առկա տեղեկությունների վրա, ինչպիսիք են անձը հաստատող փաստաթղթերը, մատնահետքերի վերլուծության արդյունքները, այն տեղեկությունները, որոնք Բելգիայի իշխանությունները ստանում են այլ անդամ պետություններից, ինչպես նաև ձեր սեփական հայտարարությունները:

Դուք կստանաք «Ես Դուբլինի ընթացակարգում եմ, ի՞նչ է դա նշանակում» տեղեկագիրը, երբ որոշում կկայացվի սկսել Դուբլինի քննություն ձեր հայցի համար:

Այդ տեղեկագիրը հասանելի է մի քանի լեզուներով և այն կարելի է գտնել նաև Օտարերկրացիների հարցերով ծառայության կայքում.

https://tinyurl.com/DPIDublinENG

Եթե քննությունից պարզվի, որ Բելգիան պատասխանատվություն չի կրում միջազգային պաշտպանության ձեր հայցը քննելու համար, **ձեզ կտրվի բնակության իրավունքի մերժման որոշում երկրի տարածքը լքելու հրամանով:** Այդ դեպքում դուք ստիպված կլինեք կամավոր մեկնել պատասխանատու անդամ պետություն:

Եթե պարզվի, որ Բելգիան է պատասխանատու ձեր հայցը քննելու համար, Օտարերկրացիների հարցերով ծառայությունը կուղարկի ձեր գործը, հնարավոր է, լրացուցիչ հարցազրույցից հետո, Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատ որը կուսումնասիրի ձեր հայցի բովանդակությունը

6.2 ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԻՆՁ ԲՌՆԻ ԿԵՐՊՈՎ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԻՄ ՀԱՅՑԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Այո, հնարավոր է որոշ հանգամանքներում:

Այդ դեպքում ձեզ կարող են պահել որոշակի վայրում (փակ կենտրոնում), մինչև հնարավոր լինի տեղափոխումը պատասխանատու անդամ պետություն:

7. ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՒՆԵՆԱ՞Մ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Միջազգային պաշտպանություն հայցողը իր հայցը ներկայացնելուց հետո հնարավորինս շուտ հարցազրույց է ունենում Օտարերկրացիների հարցերով ծառայությունում: Հարցազրույցը կարող է տեղի ունենալ հայցը ձևակերպելու օրը կամ հայցը ներկայացնելուց անմիջապես հետո: Անհրաժեշտության դեպքում հայցողը ավելի ուշ կհրավիրվի Օտարերկրացիների հարցերով ծառայություն:

Ուշադրություն : եթե չեք կարող ներկայանալ նախատեսված օրը, պետք է հնարավորինս շուտ տեղեկացնեք Օտարերկրացիների հարցերով ծառայությանը, և պատճառը ամեն դեպքում պետք է հիմնավոր լինի: Օրինակ, հիվանդության դեպքում պետք է բժշկական տեղեկանք ներկայացնեք:

Եթե ծանուցման օրվանից հետո 15 օրվա ընթացքում չեք ներկայացել Օտարերկրացիների հարցերով ծառայություն, ենթադրվում է, որ դուք այլևս չեք ցանկանում շարունակել ընթացակարգը և հրաժարվում եք միջազգային պաշտպանության ձեր հայցից: Նման դեպքում Օտարերկրացիների հարցերով ծառայությունը կարող է որոշել ձեզ տալ երկրի տարածքը լքելու հրաման:

7.1 Ո՞ՐՆ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱԿՑԻ և ԹԱՐԳՄԱՆՉԻ ԴԵՐԸ

Հարցազրույցը վարող համագործակցող աշխատակիցը սկզբից ևեթ բացատրում է իր և թարգմանչի դերը:

Եթե ձեր հայցը ձևակերպելիս թարգմանչի օգնություն եք խնդրել, նա ներկա կլինի հարցազրույցի ողջ ընթացքում:

Թարգմանչի դերը սահմանափակվում է բացառապես Օտարերկրացիների հարցերով ծառայության աշխատակցին ձեր հայտարարությունների հավատարիմ թարգմանությամբ: Թարգմանիչը չի կարող անձամբ միջամտել ձեր գործին, ոչ էլ իր կարծիքը հայտնել ձեր պատմության վերաբերյալ: Ավելին, նա չի կարող ազդել կայացված որոշման վրա: Նա պետք է միշտ լինի օբյեկտիվ և չեզոք և հարգի մասնագիտական գաղտնիությունը:

Եթե հարցազրույցի սկզբում կամ ընթացքում թարգմանչի հետ հաղորդակցվելու խնդիրներ առաջ գան (օրինակ, եթե լավ չեք հասկանում թարգմանչին), դուք պետք է անմիջապես տեղեկացնեք այդ մասին:

Եթե անձնական պատճառներ ունեք՝ ձեր փախուստի դրդապատճառների հետ կապված, և նախընտրում եք տղամարդ/կին աշխատակից/թարգմանիչ, դա նույնպես պետք է նշվի հնարավորինս շուտ: Իշխանությունները դա հաշվի կառնեն հնարավորության սահմաններում:

Հարցազրույցի համար պատասխանատու աշխատակիցը ձեզ նախապես տեղեկացնում է հարցազրույցի նպատակի, ընթացքի և այն մասին, թե կոնկրետ ինչ է ձեզնից ակնկալվում:

7.2 Ո՞ՐՆ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Հարցազրույցի տեսակը կախված է ձեր անձնական վիճակից: Կան մի քանի հնարավորություններ.

Հարցազրույց Դուբլինի ընթացակարգով

Եթե տվյալները ցույց տան, որ Բելգիան պատասխանատվություն չի կրում հայցի քննության համար, հարցազրույցը կլինի Դուբլինի ընթացակարգի շրջանակներում:
Հարցազրույցի համար պատասխանատու աշխատակիցը նախ նշում է տվյալները հայցողի ինքնության, նրա քաղաքացիական կարգավիճակի, ընտանիքի կազմի, դեպի Բելգիա կատարած երթուղու և այլնի վերաբերյալ:

Նշվում է նաև հայցի քննության համար պատասխանատու անդամ պետությունը պարզելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Առաջին հայցի հարցազրույց

Եթե առաջին հայցն է, և որևէ ցուցում չկա, որ մեկ այլ անդամ պետություն է պատասխանատու հայցի քննության համար, հարցազրույցի համար պատասխանատու աշխատակիցը նախ նախ նշում է տվյալները հայցողի ինքնության, նրա քաղաքացիական կարգավիճակի, ընտանիքի կազմի, դեպի Բելգիա կատարած երթուղու և այլնի վերաբերյալ:

Բացի այդ, աշխատակիցը հայցողի հետ լրացնում է Փախստականների ու հայրենիք չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի հարցաթերթիկը (այդ հարցաթերթիկը համառոտ ներկայացնում է հայցողի փախուստի դրդապատճառները) և նշում հայցողի պատասխանները:

Հաջորդ հայցի հարցազրույց

Եթե հայցողն արդեն միջազգային պաշտպանության ընթացակարգ է ունեցել Բելգիայում, հարցազրույցի համար պատասխանատու աշխատակիցը չի վերանայում նրա փախուստի սկզբնական պատճառները, այլ հաշվի է առնում է «նոր ապացույցները» և այն պատճառները, թե ինչու հայցողը ավելի վաղ չի ներկայացրել այդ ապացույցները: Հայցողը պետք է բացատրի, հաշվի առնելով նոր ապացույցները, թե ինչու է կարծում, որ կարող է միջազգային պաշտպանության կարգավիճակ ստանալ:

7.3 ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՎԱՐՏԸ

Հարցազրույցի վերջում ձեր հայտարարությունները բարձրաձայն ընթերցվում են (անհրաժեշտության դեպքում՝ թարգմանչի օգնությամբ): Այդ փուլում դուք դեռ հնարավորություն ունեք շտկել կամ փոխել որոշ բաներ: Այնուհետև պետք է ստորագրեք, ինչը նշանակում է, որ համաձայն եք բովանդակության հետ:

Իսկ եթե հրաժարվում եք ստորագրել այս կամ այն պատճառով, աշխատակիցը նշում է այդ մասին հարցազրույցի հաշվետվության մեջ, ինչպես նաև պատճառը, թե ինչու չեք ուզում ստորագրել:

7.4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարցազրույցի սկզբում հարցազրույցը վարող աշխատակիցը հիշեցնում է ձեզ **համագործակցելու պարտավորության** մասին:

Որպես հայցող դուք պարտավոր եք ասել միայն ճշմարտությունը և հնարավորինս ակտիվ համագործակցել իշխանությունների հետ: Կարևոր է նաև հնարավորինս շուտ ներկայացնել բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում են ձեր ինքնությունը և ձեր ծագումը (հետևաբար նաև ձեր ազգությունը), ձեր երթուղին և ձեր փախուստի պատճառները:

Հետևաբար, դուք պետք է հնարավորինս շուտ Օտարերկրացիների հարցերով ծառայությանը ներկայացնեք ձեր մոտ եղած բոլոր փաստաթղթերը (ցանկալի է **բնօրինակ փաստաթղթերը**): Դուք պետք է նաև ջանքեր գործադրեք օժանդակ փաստաթղթեր ձեռք բերելու համար, հարկ եղած դեպքում, խնդրելով ձեր ընտանիքի անդամներին կամ ձեր երկրում, կամ այլ երկրներում ապրող այլ անձանց:

Համագործակցության ցանկացած բացակայություն, խեղաթյուրում կամ իշխանություններին մոլորեցնելու փորձ կարող է բացասաբար ազդել ձեր հայցի վրա:

7.5 ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼՈՒ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Սկզբունքորեն, Օտարերկրացիների հարցերով ծառայությունում հարցազրույցին պետք է միշտ ներկայանալ անձամբ, աշխատակիցը, հայցողը և, անհրաժեշտության դեպքում, թարգմանիչը նույն սենյակում են՝ անձամբ հարցազրույց անցկացնելու համար:

Օտարերկրացիների հարցերով ծառայությունը կարող է նաև որոշել կազմակերպել հեռավար հարցազրույց, եթե անձամբ հարցազրույց անցկացնելը դժվարություն է առաջացնում կամ անհնար է: Այդ դեպքում հարցազրույցը կողմերի միջև (ովքեր տարբեր վայրերում են գտնվում) կարող է իրականացվել տեսակոնֆերանսի միջոցով՝ օգտագործելով անվտանգ և կոդավորված կապ:

Օտարերկրացիների հարցերով ծառայությունը մշտապես հետևում է, որպեսզի հարցազրույցն անցնի գաղտնի, այսինքն՝ առանձին և փակ սենյակում, առանց երրորդ անձանց ներկայության, որպեսզի պատշաճ կերպով երաշխավորվի գաղտնիությունը՝ անկախ այն բանից, հարցազրույցին հայցողը անձամբ է ներկա, թե հեռակա կարգով:

Հարցազրույցի ձայնային կամ տեսալսողական ձայնագրություն չի կարող կատարվել:

Եթե գտնում եք, որ կոնկրետ ձեր իրավիճակում տեղին չէ կազմակերպել հեռավար հարցազրույց, դուք պետք է ասեք այդ մասին ձեր հայցը գրանցելիս և նշեք, թե ինչու դա տեղին չէ ձեր դեպքում: Օտարերկրացիների հարցերով ծառայության աշխատակիցը կարծանագրի ձեր ներկայացրած փաստարկները և կկցի դրանք ձեր վարչական գործին: Այնուհետև Օտարերկրացիների հարցերով ծառայությունը կուսումնասիրի ու կպարզի,

թե արդյոք այս առարկությունները հիմնավորված են:

Այս առումով ձեր բոլոր հատուկ ընթացակարգային պահանջները միշտ հաշվի կառնվեն:

Եթե, այնուամենայնիվ, Օտարերկրացիների հարցերով ծառայությունը համարի, որ ձեր փաստարկներն անհիմն են, այդ մասին ձեզ բանավոր բացատրություն կտրվի: Ամեն դեպքում, Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ձեր վարչական գործին կկցի հեռավար հարցազրույց կազմակերպելու դրդապատճառները:

Ձեզ ժամանակին կտեղեկացնեն հեռավար հարցազրույց կազմակերպելու մասին: Դուք կստանաք նաև անհրաժեշտ տեղեկատվություն հարցազրույցի գործնական պայմանների և անցկացման վերաբերյալ:

Ձեր հայցը գրանցելիս ձեզ մանրամասն կտեղեկացնեն հեռավար հարցազրույցի պայմանների մասին և դուք կունենաք առարկություններ ձևակերպելու հնարավորություն:

Հարցազրույցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Օտարերկրացիների հարցերով ծառայության գրասենյակի կայքը.

https://tinyurl.com/DPIAuditionENG

8. Ի՞ՆՉ ՓԱՍՏԱԹՈՂԹԵՐ ԵՆ ՁԵԶ ՏՐՎՈՒՄ

8.1 ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ձեր հայցը ձևակերպելուց հետո 8 աշխատանքային օրվա ընթացքում դուք պետք է ձեր հավելված 26/26quinquies-ով ներկայանաք ձեր հիմնական բնակության քաղաքապետարան:

Եթե միջազգային պաշտպանության **առաջին հայցն** եք ներկայացրել, Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ձեզ կտրամադրի հավելված 26: Ձեր բնակության վայրի քաղաքապետարանի վարչակազմը այդ փաստաթղթի հիման վրա ձեզ կտրամադրի գրանցման վկայական:

Եթե դուք միջազգային պաշտպանության **հաջորդ հայտ** եք ներկայացրել, ապա կստանաք հավելված 26 quinquies: Այդ փաստաթուղթը երկարացվում է Օտարերկրացիների հարցերով ծառայության կողմից մինչև Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը որոշում կայացնի ձեր հայցի վերաբերյալ:

Գրանցման վկայական հնարավոր է ստանալ միայն այն դեպքում, եթե Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը ձեր հայցը ընդունելի համարի: Ձեր հավելված 26 quinquies-ը այլևս չի երկարացվի, բայց դուք կարող եք գրանցման վկայական ստանալ ձեր բնակության վայրի քաղաքապետարանից:

8.2 ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Եթե Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը կամ Օտարերկրացիների դատավարության խորհուրդը ձեզ շնորհում է փախստականի կարգավիճակ, դուք ստանում եք փախստականի վկայական: Այդ վկայականով դուք պետք է ներկայանաք ձեր բնակության վայրի քաղաքապետարան: Այդ փաստաթղթի հիման վրա քաղաքապետարանը ձեզ կգրանցի օտարերկրացիների գրանցամատյանում և ձեզ կտրամադրի A քարտ (ժամանակավոր բնակության իրավունք), որը ուժի մեջ է 5 տարի:

Հայցը ձևակերպելուց 5 տարի անց դուք կարող եք ստանալ անժամկետ բնակության իրավունք: Հարկ եղած դեպքում դուք պետք է դիմեք ձեր բնակության վայրի քաղաքապետարան B քարտ ստանալու համար: Այդ հարցումը պետք է վերանայվի Օտարերկրացիների հարցերով ծառայության կողմից:

8.3 ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒՑ ՀԵՏՈ

Եթե Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատը կամ Օտարերկրացիների դատավարության խորհուրդը ձեզ շնորհում է Օժանդակ պաշտպանության կարգավիճակ, դուք պետք է նրանց տրամադրած որոշմամբ ներկայանաք ձեր բնակության վայրի քաղաքապետարան, որը այդ վկայականի հիման ձեզ կգրանցի օտարերկրացիների գրանցամատյանում և ձեզ կտրամադրի A քարտ

(ժամանակավոր բնակության իրավունք), որը ուժի մեջ է 1 տարի: A քարտը քաղաքապետարանի կողմից կարող է երկարացվել երկու անգամ, ամեն անգամ 2 տարի ժամկետով, առանց Օտարերկրացիների հարցերով ծառայության նախնական ցուցումների: A քարտի երկարացման համար պետք է դիմել բնակության վայրի քաղաքապետարան քարտի վավերականության ժամկետի ավարտից 30-45 օր առաջ:

Հայցը ներկայացնելուց 5 տարի անց դուք կարող եք ստանալ անժամկետ բնակության իրավունք: Հարկ եղած դեպքում դուք պետք է դիմեք ձեր բնակության վայրի քաղաքապետարան B քարտ ստանալու համար: Այդ հարցումը պետք է վերանայվի Օտարերկրացիների հարցերով ծառայության կողմից:

8.4 ՄԻՁԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑԻ ՄԵՐԺՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելուց հետո Օտարերկրացիների հարցերով ծառայությունը սկզբունքորեն տալիս է երկրի տարածքը լքելու հրաման (OQT), և քաղաքապետարանը հետ է վերցնում (հարկ եղած դեպքում) գրանցման վկայականը:

Երկրի տարածքը լքելու հրամանը կարող է տրվել, եթե.

- Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի որոշման դեմ բողոքելու ժամկետն անցել է և ոչ մի բողոք չի ուղարկվել
- Օտարերկրացիների դատավարության խորհուրդը

Հաջորդ 2-րդ հայցից սկսած (= 3-րդ հայց) կարող է անմիջապես երկրի տարածքը լքելու հրաման տրվել Փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի կողմից անընդունելիության մասին որոշում կայացնելուց հետո, եթե բողոքարկումը կասեցնող չէ:

Երկրի տարածքը լքելու հրամանը սահմանում է, թե դուք երբ պետք է լքեք տարածքը:

Եթե նախկինում դուք արդեն երկրի տարածքը լքելու հրաման եք ստացել, որին չեք հետևել, Օտարերկրացիների հարցերով ծառայությունը կարող է որոշել չտալ երկրի տարածքը լքելու նոր հրաման, այլ **վերաակտիվացնել երկրի տարածքը լքելու նախորդ հրամանը:**

Անհրաժեշտության դեպքում կարող է լրացուցիչ ժամանակ տրամադրվել տարածքը լքելու համար:

Երկրի տարածքը լքելու հրամանը կամ դրա վերաակտիվացումը ծանուցվում է ընտրված բնակության վայրի հասցեով:

9. ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԴԻՄԵԼ ԻՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Եթե ընթացակարգի ընթացքում նկատեք, որ ձեր անձնական տվյալները ճիշտ չեն, կարող եք խնդրել Օտարերկրացիների հարցերով ծառայությանը ուղղել դրանք: Դուք կարող եք ասել այդ մասին ձեր առաջին անձնական հարցազրույցի ժամանակ: Աշխատակիցը ձեզ հետ կվերանայի ձեր տրամադրած տվյալները և կխնդրի ձեզ ստուգել, թե արդյոք ճիշտ են դրանք: Անհրաժեշտության դեպքում այդ տվյալները կարող են փոփոխվել:

Եթե, այնուամենայնիվ, ցանկանում եք դրանք փոխել ընթացակարգի ավելի ուշ փուլում կամ հաջորդ ընթացակարգում, դա հնարավոր է միայն վավերական միջազգային անձնագիր ներկայացնելու դեպքում:

10. ԵՍ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՄ ԵՎ ԱՌԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՆ... Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ

Եթե դուք 18 տարեկանից ցածր եք և ձեր ծնողը կամ ձեր երկրում նշանակված ծնողական լիազորություններն իրականացնող անձը ձեզ չեն ուղեկցում, ձեզ կգրանցեն որպես անչափահաս առանց ուղեկցության: Դա նշանակում է, որ Օտարերկրացիների հարցերով ծառայության աշխատակիցը, որը մասնագիտացած է այդ ոլորտում, ձեզ հետ հարցաթերթիկ կլրացնի, որն այնուհետև կուղարկվի Խնամակալության ծառայություն:

Խնամակալության ծառայության իրավասությունների մասին լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել կայքում.

https://tinyurl.com/dpiTutellesFR

Խնամակալության ծառայությունը Բելգիայում գտնվող այն մարմինն է, որը կպարզի ձեր ինքնությունը և, անհրաժեշտության դեպքում, խնամակալ կնշանակի:

Ուշադրություն. եթե կասկած լինի ձեր տարիքի հարցում, կարող է որոշվել բժշկական հետազոտություն անցկացնել: Դուք կարող եք Պետական խորհրդում բողոքարկել այդ որոշումը, որը կայացվել է հետազոտության արդյունքների հիման վրա:

Եթե արդեն երկար ժամանակ է, ինչ դուք գտնվում եք Բելգիայում, հնարավոր է, որ մեկ այլ կազմակերպություն արդեն գրանցել է ձեզ Խնամակալության ծառայությունում և, հետևաբար, դուք արդեն ունեք խնամակալ:

Ձեր խնամակալը ձեզ կուղեկցի ձեր ընթացակարգի ընթացքում: Դա նշանակում է, որ նա կստանա ձեզ վերաբերող բոլոր ծանուցումները, տեղեկությունների հարցումները և որոշումները: Ուստի անհրաժեշտ է, որ խնամակալը ներկա գտնվի Օտարերկրացիների հարցերով ծառայության կազմակերպված հարցազրույցին: Առանց ձեր խնամակալի ներկայության, հարցազրույցը չի կարող կայանալ:

Հարցազրույցը Օտարերկրացիների հարցերով ծառայությունում կվարի անչափահասների հարցազրույցի ոլորտում մասնագիտացած աշխատակիցը: Հարցազրույցի ժամանակ տրվող հարցերը հարմարեցված են ձեր տարիքին և հասունությանը:

Ձեր հայցը գրանցելիս դուք լրացուցիչ տեղեկատվություն կստանաք այս թեմայի վերաբերյալ: «ԲԵԼԳԻԱՅՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՌԱՆՑ ՈՒՂԵԿՑՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՄԱՐ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ» հասանելի է նաև տարբեր լեզուներով Փախստականների ու հայրենիք չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատի կայքում հետևյալ հղման միջոցով.

https://www.cgrs.be/en/publications

11. ԿԱՐՈ՞Ղ Է ՓԱՍՏԱԲԱՆԸ ՕԳՆԵԼ ԻՆՁ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿ

Միջազգային պաշտպանության ընթացակարգի ժամանակ ձեզ կարող է օգնել փաստաբանը: Ծախսերի համար դուք եք պատասխանատու:

Եթե ֆինանսական միջոցների բացակայության պատճառով փաստաբանի ծառայությունից չեք օգտվում, կարող եք ցանկացած պահի խնդրել pro deo փաստաբան: Pro deo փաստաբանին դուք ինքներդ եք ընտրում եք կամ նա նշանակվում է ի պաշտոնե: Դուք չպետք է վճարեք pro deo փաստաբանին: Սակայն, դուք պետք է ապացուցեք, որ միջազգային պաշտպանություն հայցող եք, օրինակ՝ ձեր հավելված 26-ի կամ հավելված 26 quinquies-ի հիման վրա:

Ուշադրություն.
եթե ավելի ուշ պարզվի, որ դուք ունեք անհրաժեշտ ֆինանսական միջոցներ/եկամուտ, ապա ստիպված կլինեք փոխհատուցել pro deo համակարգի միջոցով ստացած նպաստը ամբողջությամբ կամ դրա մի մասը:

Որպես միջազգային պաշտպանություն հայցող, դուք կարող եք ստանալ նաև իրավաբանական օգնություն: Այդ օգնությունը ենթադրում է ընթացակարգի ծախսերի նվազեցում:

Կան նաև ասոցիատիվ մարմիններ, որոնք միավորում են օտարերկրացիների աջակցության ոլորտում մասնագիտացած կազմակերպություններին:

ՄԱԿ-ի ՓԳՀ-ն (UNHCR) մոբիլիզացվում է օտարերկրացիների իրավունքները և բարեկեցությունը երաշխավորելու հարցում:

ՄԱԿ-ի ՓԳՀ-ի գործունեության մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել կայքում.
https://www.unhcr.org/be

12. ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԻՄ ԵՐԿԻՐ

Եթե նախատեսում եք վերադառնալ ձեր երկիր ձեր ընթացակարգի ընթացքում կամ դրանից հետո, դուք կարող եք օգտվել Fedasil-ի կողմից առաջարկվող կամավոր վերադարձի ծրագրերից:

Լրացուցիչ տեղեկությունների համար միշտ կարող եք այցելել հետևյալ կայք.

https://www.voluntaryreturn.be/

Եթե դուք այլևս չունեք անձը հաստատող փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ձեր երկիր վերադառնալու համար, դուք պետք է գնաք ձեր երկրի դեսպանատուն: Այնտեղ կարող եք նոր անձնագիր կամ ճամփորդական անձնագիր (laissez-passer) ստանալ:

Դեսպանատների և նրանց տվյալները հասանելի են հետևյալ կայքում, «դեսպանություններ և հյուպատոսություններ» վերնագրով

http://diplomatie.belgium.be

Ձեր երկիր անհապաղ վերադառնալու համար կարող եք նաև դիմել Օտարերկրացիների հարցերով ծառայության Կամավոր վերադարձի բաժին հետևյալ էլ. Հասցեով.

return@ibz.fgov.be

13. ԿԱՐՈ՞Ղ ԵՆ ԻՆՁ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Օտարերկրացիների մասին օրենքը նախատեսում է, որ Օտարերկրացիների հարցերով ծառայությունը կարող է որոշ դեպքերում որոշել ձեզ պահել որոշակի վայրում (փակ կենտրոնում):

Փակ կենտրոնում գտնվող հայցողը հնարավորություն ունի ամսական կտրվածքով վիճարկել իր կալանքը Առաջին ատյանի դատարանի Խորհրդի պալատում (ուղղիչ բաժին)՝ ազատ արձակման դիմում ներկայացնելով: Այդ հարցումը պետք է կազմվի հատուկ իրավական կանոնների համաձայն:

14. Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ Է ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ

Օտարերկրացիների հարցերով ծառայությունը ապահովում է ձեր տվյալների պաշտպանությունը, որոնք քննվում են ընթացակարգի ընթացքում, համաձայն RGPD-ի (Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ):

Դուք կարող եք ավելին իմանալ ՌԳՊԴ-ի կամ ՕԵ-ի տվյալների պաշտպանության քաղաքականության մասին ԱՅՍՏԵՂ կամ սկանավորելով հետևյալ QR կոդը:

https://dofi.ibz.be/en/about-us/processing-personal-data/transparency-information-data-subject/transparency-international

15. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՍՑԵՆԵՐ

Օտարերկրացիների հարցերով ծառայություն
Pacheco
Boulevard Pacheco, 44
1000 Bruxelles

Infodesk
T +32 2 488 80 00

infodesk@dofi.fgov.be
www.dofi.fgov.be
www.ibz.fgov.be

Փախստականների ու հայրենիք չունեցող անձանց հարցերով գլխավոր կոմիսարիատ
Eurostation
Rue Ernest Blerot 39
1070 Bruxelles

T + 32 2 205 51 11

cgra.info@ibz.fgov.be
www.cgra.be

Օտարերկրացիների հարցերով Դատական խորհուրդ (CCE)
Laurentide
Rue Gaucheret 92-94
1030 Bruxelles

T + 32 2 791 60 00

info.rvv-cce@ibz.fgov.be
www.rvv-cce.be

Պետական խորհուրդ (CE)
Rue de la Science 33
1040 Bruxelles

T + 32 2 234 96 11

info@raadvst-consetat.be
www.raadvst-consetat.be

Ֆեդազիլ - Ապաստան հայցողների ընդունելության դաշնային գործակալություն
Rue des Chartreux 21
1000 Bruxelles

T + 32 2 213 44 11

info@fedasil.be
https://www.fedasil.be/

Խնամակալության ծառայություն
Boulevard de Waterloo 115
1000 Bruxelles

T + 32 78 15 43 24

tutelles@just.fgov.be
https://justitie.belgium.be/

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (UNHCR Բելգիա)
Avenue Louise 283
1050 Bruxelles

T + 32 2 627 59 99

belbr@unhcr.org
https://www.unhcr.org/be

Editeur responsable : Freddy Roosemont - Boulevard Pacheco 44, 1000 Bruxelles - BCE 0308.356.862
- Ne pas jeter sur la voie publique -